Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն (1) N 94 -182

ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանի մոտ 2009 թվականի մայիսի 8-ին ժամը 12:00-ին կայացած՝ Հայաստանի Հանրապետության վարչապետին կից կանանց խորհրդի նիստի

քաղ. Երևան

Մասնակցում էին՝

Հ. Նաղդալյան	ՀՀ Ազգային Ժողովի պատգամավ (համաձայնությամբ)
Լ. Ղազարյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների հարցերի վարչության պետ
Ն. Հովհաննիսյան	ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի հանրակրթության վարչության պետ
Ջ. Հասրաթյան	Համալսարանական կրթությամբ Կանանց ասոցիա-ցիայի նախագահ (համաձայնությամբ)
Ա. Գևորգյան	Հայաստանի ժուռնալիստների միության նախագահ (համաձայնությամբ)
Ս. Ասլանյան	Հայաստանի մայրության ֆոնդի նախագահ (համաձայնությամբ)
Ն. Մարտիրոսյան	«Միկա ցեմենտ» ՓԲԸ-ի գործադիր տնօրեն
Ց. Գևորգյան	Վաճառականների միության նախագահ (համաձայնությամբ)
Ն. Դուրյան	ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության ՔՀՎ 3-րդ վարչության պետ, ոստիկանության գնդապետ
Գ. Արմաղանովա	Առողջապահության աշխատողների արհմիությունների հանրապետական կոմիտեի նախագահ (համաձայնությամբ)
Գ. Միրզոյան	Զինվորի մայր հ/կ-ի նախագահ (համաձայնությամբ)

Ա. Ժամկոչյան	«Դեմոկրատիայի դպրոց» ակումբ, սոցիոլոգ-փորձագետ, Կանանց հանրապետական խորհուրդ» հասարակական կազմակերպության նախագահության անդամ (համաձայնությամբ)
Գ. Սողոմոնյան	ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետի դասախոս
Ա. Կարապետյան	ՀՀ կառավարության աշխատակազմի սոցիալական վարչության պետ (խորհրդի քարտուղար)

1. Հայաստանի Հանրապետությունում կանանց վիճակի բարելավման և հասարակության մեջ նրանց դերի բարձրացման 2004-2010 թվականների Ազգային ծրագրի մասին հաշվետվություն

(Ֆ. Բերիկյան, Լ. Ղազարյան, Ջ. Հասրաթյան, Հ. Նաղդալյան,
Ա. Կարապետյան, Տ. Սարգսյան)

1. Ընդունել ի գիտություն Հայաստանի Հանրապետությունում կանանց վիճակի բարելավման և հասարակության մեջ նրանց դերի բարձրացման 2004-2010 թվականների ազգային ծրագրի կատարման ընթացքի մասին հաշվետվությունը:

2. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին՝

1) յուրաքանչյուր եռամսյակը մեկ անգամ ՀՀ վարչապետին կից կանանց խորհրդի նիստի քննարկմանը ներկայացնել Հայաստանի Հանրապետությունում կանանց վիճակի բարելավման և հասարակության մեջ նրանց դերի բարձրացման 2004-2010 թվականների ազգային ծրագրով նախատեսված միջոցառումների կատարված և չկատարված կետերի մասին տեղեկատվություն.

2) յուրաքանչյուր տարի թարմացնել Հայաստանի Հանրապետությունում կանանց վիճակի բարելավման և հասարակության մեջ նրանց դերի բարձրացման 2004-2010 թվականների ազգային ծրագիրը՝ ներառելով բոլոր այն միջոցառումները, որոնք նախատեսված չեն եղել, բայց իրականացվել են՝ ելնելով առաջացած խնդիրներից.

3) ՀՀ վարչապետին կից կանանց խորհրդի առաջիկա նիստին ներկայացնել Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայի՝ Հայաստանին վերաբերող դիտողությունների վերաբերյալ առաջարկություններ։

2. ՀՀ վարչապետին կից կանանց խորհրդի աշխատակարգի վերախմբագրված տարբերակին հավանություն տալու մասին

(Լ. Ղազարյան, Ջ. Հասրաթյան, Հ. Նաղդալյան, Ա. Կարապետյան, Տ. Սարգսյան)

Հավանություն տալ ՀՀ վարչապետին կից կանանց խորհրդի աշխատակարգի վերախմբագրված տարբերակին։

3. ՀՀ վարչապետին կից կանանց խորհրդի աշխատանքային խմբերի ձևավորում

(Լ. Ղազարյան, Ջ. Հասրաթյան, Հ. Նաղդալյան, Ա. Կարապետյան, Տ. Սարգսյան)

1. Ձևավորել ՀՀ վարչապետին կից կանանց խորհրդի հետևյալ աշխատանքային խմբերը՝

1) կրթության, գիտության և մշակույթի աշխատանքային խումբ՝ Գ. Սողոմոնյան (խմբի ղեկավար), Ա. Գևորգյան, Ն. Հովհաննիսյան, Ջ. Հասրաթյան, Ա. Գրիգորյան, Հ. Նաղդալյան, Ն. Դուրյան, Լ. Ղազարյան.

2) սոցիալ-տնտեսական հարցերի և առողջապահության աշխատանքային խումբ՝ Ս. Ասլանյան (խմբի ղեկավար), Գ. Արմաղանովա, Գ. Միրզոյան, Ն. Մարտիրոսյան, Ն. Դուրյան, Ց. Գևորգյան, Ա. Հովհաննիսյան, Լ. Ղազարյան.

3) հասարակական կազմակերպությունների և գործադիր մարմինների հետ համագործակցության աշխատանքային խումբ՝ Ջ. Հասրաթյան (խմբի ղեկավար), Հ. Նաղդալյան, Ն. Հակոբյան, Ց. Գևորգյան, Լ. Ղազարյան, Ա. Ժամկոչյան։

2. ՀՀ վարչապետին կից կանանց խորհրդի աշխատանքային խմբերի ղեկավարներին՝ մինչև 2009 թվականի մայիսի 22-ը, ՀՀ կառավարության աշխատակազմի սոցիալական վարչություն ներկայացնել 2009 թվականի՝ ՀՀ վարչապետին կից կանանց խորհրդի աշխատանքային խմբերի ծրագրերը։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ Ա. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ